ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35ՐԴ ՏԱՐԻ — 1886 ՍԵՊՏԵՄԲԵՐ 6 — ԹԻՒ 3835

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐԵՐ

ՆԻՒ-ԵՈՐՔԻ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱՂՔԱՏ ՄԱՍԸ

Ա.

Հակապատկեր. — Աղքատութիւնն ո՞ւսկից կուգայ ի Նիւ-Եորք. — Ամերիկեան էլտորատոն յաչս Հայոց. — Իտալացիք. — Աղբանոցները. — Ապրուստի միջոցներ. — Տեսութիւն մը բնակարանաց եւ հոտերու բաղադրութեանց վրայ. — Իռլանտացիք. — Օղի եւ «մեզէ»։

ՆԻՒ-ԵՈՐՔ, 27 Օգոստոս

Իւր բազմամարդութեամբն, անթիւ եւ ընդարձակ գործարաններովը, հարստութեամբն, աղքատութեամբն եւ ընդհանուր համաշխարհիկ բնութեամբը, Նիւ-Եորք կը ներկայացնէ մեզ Ամերիկայի ամենէն յարմար քաղաքը գործաւորաց դասը քննելու։

Ցայտնի է որ քաղաքիս հարստութեանը հաւասարող այլ քաղաք մը չի կայ այս երկրին մէջ եւ թերեւս ամբողջ աշխարհի վրայ, եթէ տէրութեան վերաբերող մասը հաշուոյ չառնուի։ Այրի Տիկին Մորկանի մահուամբ իւր ժառանգորդք նորա ինչքն ի վաճառ հանեցին։ Այս կինը 250 ի մօտ իւրաներկ պատկերներ ունէր՝ որոց ինք մէկ միլիոնէ աւելի տօլար վճարած էր, մինչդեռ իւր տան ամբողջ կարասեաց աւելի քան երկուք ու կէս միլիոն տօլար ծախսած էր։

Այս իրողութիւն իւր հակապատկերն ալ ունի։ Չի կայ քաղաք մը — գոնէ այս երկրին մէջ — ուր աղքատութիւնն իւր անագորոյն ճիրանները սեւեռած ըլլայ այնքան հաստատամտութեամբ որչափ ի Նիւ-Եորք քաղաքի։

Նախ պէտք է խոստովանինք որ աղքատութիւնն որ և է զարհուրելի աստիճաններու հասած չէ բուն Ամերիկացւոց մէջ, եւ այդ է պատճառ Նիւ-Եորքի ամենէն աւելի բազմաթիւ աղքատ ժողովուրդ ունենալուն. ըստ որում քաղաքիս աղքատ ժողովրդեան մէկ տասներորդը բուն Ամերիկացի չեն՝ այլ Եւրոպացի գաղթականներ։ Նիւ-Եորքի մէջ աւելի թուով Գերմանացիք կը բնակին քան աշխարհիս վրայ գըտնուող որ եւ է ուրիշ քաղաքի մը մէջ, բացի Պէրլին եւ Վիէննա մայրաքաղաքներէն, Մինչդեռ հոս բնակող Իռլանտացւոց թիւն աւելի է քան իրենց գլխաւոր քաղաքին, Տըպլինի, իռլանտացի բնակչաց թիւը։ Իտալացւոց մասին համեմատութիւն մը իմացած չենք, բայց սոքա ալ բազմաթիւ են։ Սեւերն ալ մեծ մաս մը կը կազմեն աղքատ մասին մէջ։ Չինացիք ո՛չ այնչափ աղքատ են եւ ո՛չ ալ բազմաթիւ։ Ճաբոնցիք շատ փոքրաթիւ են եւ աղքատ չեն. Գաղղիացիք ո՛չ բազմաթիւ են եւ ո՛չ ալ մասնաւորապէս աղքատ։ Ամեն ազգի ներկայացուցիչք կան այս քաղաքին մէջ զորս թուել աւելորդ կը համարինք, բուն խնդրոյ հետ անոնց մասնաւոր կապակցութիւն մը չ'ունենալնուն համար. սակայն կ'ուզենք յիշել մեր Ազգին ներկայացուցիչներն՝ որք գրեթէ ամենէն սակաւաթիւն են, իսկ իրենց դրամական կապակցութեան վրայ գաղափար մը յայտնել աւելորդ կը համարինք, ըսելէ յետոյ

թէ, Հայ միլիոնատէր չի կայ Նիւ-Եորքի մէջ։

Տեղեակ ենք սա իրողութեան որ ոմանք Հայոց այնպէս կը կարծեն թէ Ամերիկայի մէջ ոսկին և արծաթը փողոցները սփռուած են և միայն ծռիլ մնացած է ժողովելու համար զանոնք այն երջանիկ արարածներուն որք բարեբաղդութիւնն ունեցած են հոն ժամանելու։ Այս մտածումով քանի քանի հայրենակիցք, առանց լեզուն գիտնալու եւ արհեստ մը ունենալու, եկած են հոս եւ երազածնին միայն երեւակայական ինչ լինիլն իմանալով վերադարձի ծախուց համար հանգանակութեան պէտքն զգացած են։ Բաւական ատեն առաջ Ատլանտիկ մէջ Քալիֆորնիայէն գրուած նամակ մը կարդացինք որ «առատութեան երկրին» գոնէ այդ մասին մէջ դեռ ժայռերէ մեղր բղխիլը կը ծանուցանէր, թերեւս թելադրութեամբ այն Քալիֆորնիական հողային ընկերութեան որ այդպիսի խոստումներով կ'ուզէ հող ծախել եւ որու կատարեալ խարդախութիւն մը ըլլալը վերջերս առաջնակարգ խնդիր մը եղաւ։ Իրաց տեղեակ բարեկամ մը կ'ըսէ թէ՝ իրողութիւնը նամակագրին պատմածին բոլորովին հակառակն է։ Երեք հազար մղոն հեռաւորութենէ մը Քալիֆորնիոյ մէջ դեռ մեղր կենալը կամ ոչ մենք որոշ կերպով չենք կրնար հաստատել, բայց ընթերցողաց առաջ կը դնենք բնական քաղաքնուս տխուր կողման մէկ նկարագիրն եւ իրենց կը թողունք որոշումներ ընել։ Այն նկարագրութիւնն ի հարկէ մեր տկար գրչին ներած չափովը պիտի գծուի, սակայն ընթերցողք կրնան ապահով ըլլալ որ ո՛չ չափազանցութիւն պիտի գտնուի մեր յօդուածի մէջ և ո՛չ ալ սխալ ներկայացումներ։

Նիւ-Եորքի ամենէն աղքատ հասարակութիւնն Իտալացւոցմէ կազմեալ է։ Այսոնց բառարանին մէջ մաքրութիւն բառն իւր մէկ տառն իսկ չէ համարձակած մուծանել։ Եթէ տան մը տէր եղող թշնամիդ անխնայաբար պատժել կ'ուզես, անոր տունը վարձէ տարուան մը համար, եւ յետու վարձու տուր Իտալացւոց։ Այսոնք միշտ տուն փոխելու պարտաւորեալ ըլլալով վարձուր գտնել դժուար դործ մը չէ։ Տարուոյն վերջը նոյն փողոցն իւր արժէքը բոլորովին կը կորսընցնէ, իսկ թշնամւոյդ տունն այլ եւս ձրի իսկ առնող չի գտնուիր թերեւս։ Ցառաջ քան ասոնց տուներէն միոյն այցելութիւն ընելու, իրենց զբաղմանց վրայ փոքր տեղեկութիւն մը տանք։

Տգիտութիւնն ընդհանուր է այս ժողովրդեան մէջ։ Բարոյականութեան աղնուացուցիչ զգացումը շատ փոքր քանակութեամբ ներկայութիւն ունի, եթէ երբէք ունի։ Ասոնց վրայ բարդուած է իրենց անգլիերէն լեզուին ունեցած կատարեալ տգիտութիւնն, եւ որով, աւելորդ է ըսել, ամենքն ալ ըստորին աստիճանի գործաւորներ են։ Երբ երկաթուղւոյ ճանապարհ մը չինուի Իտալացիք խուռն բազմութեամբ կը վարձուին եւ մինչ ցաւարտ նոյնին ամենօրեայ գործ մը կ'ունենան, ստանալով օրը 75 սենթէն մինչ մէկ ու կէս տոլար։ Իսկ երբ այս տեսակ գործ մը չ'ունենան կ'ընկերանան ասոնց՝ որք փողոցները դրուած աշ պաբիլներուն մէջէն նետուած հին լաթի կտորուանք կը հաւաքեն (աշ պաբիլ ըսուածը, որ բառ բառ «մոխրոյ տակառ» կը նշանակէ, չէ՞ՔՆ ամն ըսել է, որու մէջ կը դրուին ամեն առաւօտ իւրաքանչիւր տան վառեալ հանքածուխին մոխիրն եւ այլ թափցու նիւթեր, զորս քաղաքապետութեան կառքը կը պարպէ ամեն օր)։ Ուրիշներ կոլտրտին իրենց կանանց ընկերակցութեամբ, որոնոր միշտ իւր կուրծքին վրայ կը տանի իւր նորածին ենթադրեալ կամ բնական զաւակն, եւ մինչդեռ այրը ձայնաւոր գործի մը կը դարձնէ, կինը դրամ կը հաւաքէ բարեսիրտ անձերէ։ Ընդհանուրին գործն առաւօտեան ժամը 4էն (արշալոյսէն երկու ժամ առաջ) մինչ ժամը տաս կը տեւէ, այսինքն՝ կէս օրէն երկու ժամ առաջ կամ ամբողջ վեց ժամ։ Այս միջոցիս գործերնին է դեռ քաղաքապետութեան կառքը չի հասած սոյն աշ պաբիլներէն՝ արդէն վառեալ եւ նետուած հանքածուխներ ժողովել իրենց տան մէջ կրկին վառելու, եւ նաեւ արժան գնով իրենց հիւանդ կամ այլ զբաղմամբ զարարած ճանաչելոց ծախելու համար։ Ասկից զատ հոն նետուած ամեն տեսակ ոտուներ եւ այլ ուտելեաց մնացորդք կը հաւաքեն իւրեանց ընտանեաց ի կերակուր։ Մենք շատ անգամ տեսած ենք մարդիկ որ աշ պաբիլներու մէջէն նետուած եւ բոլորովին փտած սլաքուղներ հանելով ինչպէս նաեւ մոխրա-

թախախ հացի կտոր մը, կը սրբեն զայնս իւրեանց վերարկուին վրայ եւ կ'սկսին ախորժանօք ուտել — գոնէ անօթութեան ազդեցութենէն — զորս, թոյլ տուէք բաղդատութեանս տգեղութեանը, ամերիկեան շունք սովալուկ ալ լինին չեն ուտեր։

Ուրիշ մաս մ'ալ փողոցներուն անկիւնները մրգեղէն ծախելով կ'ապրի։ Իտալացի այս դասուն վերաբերող կանայք շատ կարճահասակ են, եւ աւելորդ է ըսել նիհար։ Պատճառն ահաւասիկ. ամեն առաւօտ կանայք փողոց կ'ելնեն, կը ժողովեն նետուած փայտի կտորներ եւ ծրար մ'ընելով գլուխնուն վրայ կը դնեն եւ այսպէս օրը երկու երեք ժամ կը շրջին, մինչեւ որ ծրարնին այնչափ մեծնայ որ այլ եւս դժուարին ըլլայ գլուխնէն վար առնել փայտի ուրիշ կտորուանք յաւելելու համար ասոնց վրայ։ Յաճախ տեսած ենք կիներ որ իրենց կրկին մեծութեամբը պարկի մը մէջ նետուած թուղթեր, լրագիրներ եւ լեցնելով գլուխնուն վրայ կը դնեն, և պարկին ծանրութեան ներքեւ կը տատանին յոյժ յամբաշարժ քայլեր առնելով։ Մասնաւոր գործ մ'է իրենց համար կարելի եղածին չափ ուտելեաց եւ հանդերձեղէնի համար դրամ չի վատնել, ուստի մարէլի (բազար) կ'երթան ամեն օր, եւ հոն նետուած փտած պտուղ եւ բանջարեղէն կը ժողովեն իրենց ճաշի համար, եւ մեծ մասամբ իրենց ժողված լաթի կտորներով հանդերձ կը պատրաստեն։

Գիշեր ատեն Իտալացւոց բնակած թաղերէն ոմանց մէջ ճամբորդութիւն ընելը վտանգաւոր է. մինչև իսկ եթէ գրպանդ միայն 25 սէնթ գտնուի, կողոպտուելու փորձութենէն զատ՝ կեանքդ ալ ի վտանգի լինի թերեւս։ Մենք՝ մեր պատոյտը ցերեկ ատեն ըրինք եւ մեր բարեկամը՝ գացած տուներնուս տէրոջը կողմանէ իբր պաշտօնեայ ներկայացաւ, թէ եւ արդարեւ տանը տէրը կը ճանչէր եւ խոստացած էր իւր գտած պակասութիւնները յայտնելու իրեն։ Թէնէտիկ հասոս կոչուածները այնպիսի տուներ են որք քսանէն մինչ հարիւր, ոմանք աւելի, սենեակներ կը պարունակեն եւ իրենց վարձակալը իւրաքանչիւրը մէկ կամ երկու կամ աւելի սենեակներ վարձած են։ Վերջապէս հասանք նախ Իտալացւոց բնակած Ընէնքէնի հասոս մը որ դուռ բնաւ չ'ունի, սանդուխք նեղ են, եւ փողոցէն աւելի աղտոտ։ Ձեռքերնիս անդգալապէս գրպաններս կը մտնէ եւ թոքերնիս կը դադարեցնեն իրենց շարունակական գործունէութիւնը՝ մինչեւ որ թաշկինակնիս քթերնիս կը ծածկէ և բոլորովին շնչասպառ չը լինելու համար չափաւորեալ շնչառութեան կ'սկսինք, քաջալերութիւն տալով մեզ որ սկսած գործերնիս աւարտելու ենք։ Տանը սրահները մութ են եւ տախտակամածները ծակերով լի, բայց մեր բարեկամը վարժութիւն ցուցնելով սենեկի մը դուռը կը զարնէ՝ թէ եւ դրան վրայ գտնուած ծակերէն արդէն ներքին կողմն ըստ բաւականի կը տեսնուի։ Հոս նկարագրական մեծ հանճարի պէտք կայ, որնոր դժբաղդաբար չ'ենք կարծեր որ գոյութիւն ունի ի մեզ։ Ցնցոտիներու մէջ ծրարեալ կին մ'է դուռը բացողը. Իտալերէն լեզուաւ հարցում մը կ'ուղղէ. կ'երեւայ թէ ինչ ուզելնիս կը հարցնէ։ Ո՛չ բարեկամնիս եւ ո՛չ ալ մենք գիտենք իտալերէն, ուստի անգլիերէն կը պատասխանէ. «Տան տիրոջ կողմանէ եկած եմ տեսնելու համար որ կոտրած պատուհան ունի՞ք», և ցուցնելով պատուհանը կը յառաջանայ եւ կը մտնենք սենեակը։ Թէ եւ մինչ այն ատեն քիչ շատ անուշահոտ կլիմայից վարժուեցանք, բայց սենեկին աւելի քան վերջին աստիճան ապականեալ օդն որ յառաջ եկած է տաքութեամբ (ձըմեռ է եղանակը), հոն եփող կերակրոց դարշելի հոտով եւ մնացեալ հոտերով, զորս թող ընթերցողն երեւակայէ, խառնեալ այս փոքրիկ եւ ցած սենեկին մէջ բնակող ութ կամ ինն անձանց շունչերուն հետ, կ'ստիպէ զմեզ բոլորովին դադրեցնել շնչառութիւնիս։ Սենեակը կատարելապէս տակն ու վրայ է։ Ո՛չ անկողին կայ որոշ և ո՛չ աթոռ. կարծես նոյն օրը տեղափոխելու վրայ են։ Կինը կուրծքին վրայ տղեկ մը ունի, ուրիշ մը կիսամերկ գետինը նստած մեզ կը յառի, ուրիշ մանուկ մը կուլայ, ուրիշ մը հացի չոր կտոր մը ուտել կը ջանայ, բայց մեծ դժուարութեամբ կրնայ կտրել զայն իւր սուր ակռայներով, քանզի չորեքօրեայ է հացը։ Տղոց եւ ոչ մէկը վեց տարեկանէն աւելի է։ Երեւի թէ հայրերնին է քիչ մը հեռուն նստողն որ իւր ծխաքարշը

կը ծխէ եւ այս փոքրիկ սենեակին օդը ի ծուխ կը վերածէ, օգնական ունենալով այս գործին մէջ իրեն հետ խօսակցող քանի մը ուրիշ անձինք, որոց ամենուն դիմաց վրայ տառապանքն իւր տգեղ կնիքը դրօշմած էր։ Այս անձինք իրենց օրական գործն աւարտած են արդէն եւ օրուան մնացեալ մասը տունը պիտի անցունեն (կէս օրին երկու ժամ կ'ուզէ այս միջոցիս)։ Մինչդեռ բարեկամս կ'ապահովցնէ զիրենք՝ որ իրենց կոտրած չորս ապակիներն, որոց վրայ լաթ մը անցուցած են հովէն եւ ցրտէն պաշտպանուելու համար (թէեւ այդ խիստ պիտանի էր օդափոխութեան համար), անմիջապէս պիտի նորոգուին, անդին կերակրոյ ամաններէն մին չափէն աւելի տաքցած ըլլալով՝ իւր պարունակութենէն մաս մը դուրս կրակին վրայ կը պարպէ, որու պատճառած հոտն առնելնուս ինքզինքնիս անմիջապէս սենեակէն դուրս կը գտնենք, այսպիսի տխրալից տեսարանի մը պատկերը խորին կերպով տպաւորած ըլլալով մեր մտաց վրայ իւր հետքը։ Թէ եւ ուրիշ սենեակներ ալ գացինք բայց միայն նկարագրութիւնը բաւական կը համարինք, ըստ որում միւսներուն մէջ ալ մի եւ նոյն բանն էր, միայն սա տարբերութեամբ որ ոմանց սենեակներ այսչափ շուտ չը բացուեցան՝ ներսը բարձրաձայն կռուոյ բռնուած ըլլալնուն համար, հաշուոյ մը պատճառաւ կ'երեւայ թէ որ տումարին մէջ սխալ գրուած ըլլալու էր։

Այս միջոցիս զԱնգլիա յուզող օրուան անլոյծ խնդիրներէն մէկն է տակաւին Իռլանտիոյ ազատութեան գաղափարն, որ պատճառ եղաւ Պ. Կլատստոնի նախարարութեան անկման։ Ամերիկա կ'օգնէ Պ. Բառնէլի եւ իւր ընկերաց, գոնէ դրամական կերպով, սակայն այս դրամին մեծ մասն Իռլանտացւոցմէ կը հաւաքուի։ Ի պատշաճի է ուրեմն ասոնց վրայ երկու խօսք ընել։ Ահա կը թարգմանենք ուսեալ բարեկամի մը նամակին մէկ մասն որ այս մասին գաղափար մը կուտայ իբր բուն Ամերիկացւոյ մը կարծիքը։ Իռլանտացւոյ մը թաղման հանդէսն որու ներկայ եղած է, համառօտիւ նկարագրելէ վերջ, սա պէս կը գրէ. «Իռլանտացիք ոյլանդակ ազգ մ'են. ես չեմ հաւնիր իրենց իբր ազգ մը քանզի իրենց չեմ վստահիր, եւ սակայն ո՛րպէս կը կառավարեն մեր խեղճ Ամերիկան։ Ես լաւ գիտցած եմ իրենց ճշմարիտ բնաւորութիւններն, և որչա՛փ աւելի կը տեսնեմ զիրենք այնչափ աւելի կը զզուիմ իրենցմէ։» Մինչդեռ մեծատուն Իռլանտացիք կան ի Նիւ-Եորք, որք քաղաքական մեծ ազդեցութիւն եւս ունին, որպէս Ճօն Քէլլի եւ արդի քաղաքապետը, Պ. Կրէյս, ուրիշներ ալ կան սակայն որ մեծաւ մասամբ աղքատ են որոց վրայ կ'ուզենք խօսիլ մեր յօդուածի մէջ։ Նիւ-Եորքի ծերակոյտին մեծ մասը Իռլանտացի են, որոնք մեծ մասամբ գինեպաններ են։ Երբ Իռլանտացի մը Նիւ-Եորք հասնի ի՞նչ ըլլալ կը փափաքի. հարո՞ւստ, նախագա՞հ. ո՛չ, բօլիսմէն։ Ութսուն առ հարիւր քաղաքիս բօլիսը Իռլանտացի է որոց տարեկանը 200 ոսկի է նախ եւ յետոյ կ'աւելնայ, բաց ի այն կամայ և ակամայ նուէրներէն զոր կ'ստանան ժողովրդէն։ Ամեն տեղ եւ ամեն ազգի մէջ գործ չ'ունեցող մարդիկ կը գտնուին, ուստի՝ Իռլանտացի անուան անպատուութիւն մը չէ երբ ըսենք որ քաղաքիս դատարկաշրջիկներուն մէջ Իռլանտացիք ալ կան։ Անոնք որ գործաւոր մասը կը կազմեն ընդհանրապէս՝ որմնադիր, որմնադրաց օգնական, քաղաքիս երկաթուղւոյ ճանապարհաց վրայ աշխատող, հանրակառքի կառապան եւ այլ մի քանի այս կարգի գործերով կ'ըզբաղին, որք գրեթէ միշտ պատրաստ գործ ունին։ Անոնք որ կանոնաւոր գործ չ'ունին, Ովկէանեան նաւերու գալստեան կ'ըսպասեն, որ ատեն ժամը 40 սէնթ (10 ղշ) ստանալով նաւը կը պարպեն եւ կը բեռնաւորեն. այլ այս բաւական ապրուստ մը չի տար իրենց, ըստ որում միայն մէկ կամ երկու ժամ կը տեւէ օրական աշխատութիւննին, որով շահած դրամնին չնչին բան մ'է այս սուղ քաղաքին մէջ ապրելու համար։ Իռլանտայի օղին (այրիշ հուիսքի) շատ համբաւաւոր է, եւ զարմանալի չէ որ երկրիս ամենէն ընտիր գինետուններն Իռլանտացւոց կը վերաբերին, որոց աշխատաւորք եւս Իռլանտացի են։ Սոքա աժան կը ծախեն իրենց ապրանքը. տուած ձրչէնին այնչափ առատ է որ կ'արդարացնէ զիրենք ազդարարելու իրենց դռներուն վրայ, «Ձրի կերակուր»։ Կ'իմանանք որ գաւաթ մը օղի

խմողին արդարեւ կերակուր մ'ըլլալու չափ բան կը տան, որնոր կատարելապէս կը մարսուի այն անձանց կողմանէ, որոց կերպարանքը մարդու նմանութիւն ունի թէեւ, այլ երեսնուն կաշին դեռ Տարվինի ձեռքէն անցած չէ, որով այդ մասը կապիկի նմանութիւն ունի գոնէ կարծրութեան կողմանէ: Մեր տանց այցելութեան մէջ Իտալանտացւոց տունն ամենէն լաւն և մաքուրը գտանք — կարելի եղածին չափ —: Սոքա հասկցուելու չափ անգլիերէն կը խօսին:

Կոտրած պատուհան դանուիլը տեղեկանալու միայն պատրուակաւ եւ մասամբ ճըշմարտութեամբ ամեն սենեակ մտանք: Միայն կիները տունն էին եւ հօս որ և է այրայք չը տեսանք. կ'երեւայ թէ Իրլանտացիք չեն սիրեր այրայք իրենց տան մէջ պահել: Միայն մէկ սրահի մը մէջ գտնուող փոքր անկողնոյ սնեկի մը մէջ, ուր կոտրած ապակի գտնուելուն համար կինն առաջնորդեց զմեզ, տեսանք փոքր եւ խիստ անմաքուր անկողնոյ մը մէջ ննջող մարդ մը, որ անբաճկոն էր թէ եւ այլ ուրիշ կերպով կատարելապէս հագուած: Մեր մուտքը չ'արթնցուց զանի, կ'երեւայ որ գիշերը շուգենաւ պարպելու պարապած էր: Այս փոքրիկ սենեակ լի էր աղտոտ հագուստներով որոնք պատերուն վրայ կախուած տխուր տեսք մը կուտային ննջարանին, այնպէս որ անզգալի արագութեամբ մը մեկ վայրկենի մէջ սենեկէն դուրս ելած էինք: Ուրիշ անկարգ սենեակի մը մէջ, իւր դիմաց վրայ ցաւ եւ վիշտ նկարեալ կին մը գտանք, բնականաբար ոտքի վրայ: «Տիկին, ինչո՞ւ ձեր պատուհաններն այսպէս կոտրած կը մնան եւ սենեակնիդ աւերակ վիճակի մը մէջ», համարձակեցանք հարցնել կարեկցութեան արտայայտութեամբ մը, զոր կնոջ տխուր դէմքն ազդեց մեզ: «Դեռ երեք օր է, պարոն, որ իմ մէկ հատիկ մանչս կորուսի, տեսնէիր թէ ինչ սիրուն զաւակ մ'էր: Դեռ այսօր քաջութիւն առի ոտքի ելնել եւ սենեակս կարգադրել», պատասխանեց խեղճ կինն իւր աչացը արտասուքը սրբելով: Քանի մը մխիթարիչ խօսքեր ընելէ վերջ թողինք սենեակն համոզուելով որ վերջին արտիճանի աղքատ եւ անկարեկից մօր մը սէրը՝ նոյնչափ զօրաւոր է, որչափ թագուհւոյ մը սէրը կարելի է ըլլալ իւր թագաւորազուն իշխան զաւկին վրայ:

ՀԱՅԸ

ՆՈՐԱՎԷՊ

ՀԱՅՈՒ ՄԸ ՏԻՊԱՐԸ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԵԱՆՔԻՑ)

Փառաւորեանց երիտասարդը հարուստ մարդու որդի էր, եւ ինչպէս ասում էին հայերը, անուանի օջախից: Սա հարաւի որդկերանց մի տիպար էր: Թաւախիտ սեւ մազերը յօրինում էին գեղեցիկ շրջանակ նրա փոքր ինչ մաշված եւ գունատ պատկերի համար: Խոժոռ եւ սեւ աչքերը հոգւոյ հանդարտ րոպէններում ամենին անտարբեր եւ ծուլութեամբ էին նայում, մի այլ ժամանակ նրանք ճշդութեամբ նահանջում էին սրտի ամեն մէկ ազդեցութիւնը: Շըրթունքը շատ սակաւ համեմվում էին հեգնական ժպիտով, որոնց այս պահուն օգնում էին նրա արծուային ունչերի երկու կիսաշրջանակներն եւ խրթնացած սեւ յօնքերը: Ոչ մի կծու գիծ չէր խանգարում այս պատկերի համաձայնութեան քաղցրութիւններն: Բարձր հասակը և լայն կուրծքը խոստանում էին զուարթ առողջութիւն: Սա ամեն մէկ քայլափոխում իր արտաքին ձեւերը աշխատում էր նմանեցնել իր հանգուցեալ հօր շարժուածքին, որը սովոր էր միշտ հրամայելու, բղավելու. անսանձ էր, կամապաշտ, ինքնահաւան եւ դիւրադրգիռ:

Փառաւորեանց-հայրն անդրկովկասեան այն նախատիպերից էր, որք, հայ լինելով, չը գիտէին հայի լեզուն, նրա պատմութիւնը, նրա աւանդութիւնը, նրա ժամանակակից չարն ու բարին, պահանջը, կարօտը եւ ակնկալութիւնը: Բարդված դըրացի թաւադների կաց ու նիստով, պարսկի ամենայն տեսակ զազրելի եւ աղտոտ ընդունակութիւններով, լեռնաբնակների ան-

կատարած տղամարդութիւնով, եւրոպական արիստոկրատութեան թափթփուքի վաւաշկոտութիւնով եւ հայի բնաւոր յատկանիշ ճարպիկութիւնով եւ արծաթասիրութիւնով, նրանք ժողովրդի գլուխն էին անցնում եւ ամենայն ինչ եւ ամենայն ոք իրանց կամքին, կրքերին եւ օգտին էին ծառայեցնում։ Այս տեսակ տիպերը մի քսան, երեսուն տարի առաջ մեր առաջաւոր մարդիկ էին, աղաներն էին։ Նրանք իդէալներ էին հասարակութեան մէջ. վեհ եւ անմատոյց տեղ էին բռնում հասարակ ժողովրդի աչքում։ Նրանք այն անձնաւորութիւններն էին, որք ազգի պայծառութիւն, ազգի լոյս, ազգի յոյսն էին կոչվում մեր յետադէմ փոխասողներից։ Որքան որ նենգամիտ լինէին այս բաղդախնդիր ասպետները, նոյնքան խելացի, խոհեմ էին համարվում մեր միւս սեւագլուխ ասպետների կողմից. որքան որ նրանք ինքնահաւան եւ փառասէր լինէին, նոյնքան գովաբանվում, փառաբանվում էին մեր կղերից. որքան որ նրանց անողորմ հաշիւներին ենթակայ լինէր ազգը, նոյնքան մեծ էին ժամկոչների աչքում նրանց բարերարութիւնը եւ խընամքը դէպի ազգը։ Սակայն իրապէս նըրանք գայլեր էին գառանց հօտի մէջ... Այս տիպարների տեսակներն այժմս էլ կան և ի հարկէ՝ ժամանակին յարմարացրած մարթերով...։

Փառաւորեանց-հայրն ամբարիշտ էր ընկերութեան մէջ. խորամանկ, խաբեբայ, կեղծաւոր եւ շողոքորթող՝ իրանից փոքր ինչ վեր աստիճանի մարդկանց առաջ, ամբարտաւան՝ իրանից ցածր մարդկանց հետ. կոշտ, կոպիտ եւ վհատեցուցիչ գերդաստանի շրջանում։ Այստեղ, եթէ սա բերանը բացանելու լինէր, անշուշտ ընտանեաց մի որ եւ է անդամի վրա բղավելու կամ նրան պախարակելու պիտի բացանէր. ձեռքը, եթէ բարձրացնելու լինէր, աներկբայ՝ մէկի գլխին պիտի իջեցնէր։ Ում վրա որ նայէր, միշտ չարն ու յոռին պիտի նկատէր, և վայ նրան, որ նրա քննութեան առարկան լինէր։ Հեշտ է եզրակացնել, որ նրա ամբողջ ընտանիքը ստրուկների պէս էին շուռ գալի նրա ներկայութեամբ, և ազատ շունչ էին առնում միայն այն ժամանակ, երբ սա ոտը դռնից դուրս դնէր, բայց այն էլ մօր հոգեմաշ ճղճղան ձայնի սպառնալիքներով թէ՝ «պապաշի»ին ամեն ինչ պիտի պատմէ, նրանց հոգիները առնելու համար։ Այսպէս միշտ եւ յարաժամ, երէկը՝ նման այսօրվան, վաղը՝ պիտի կրկնվէր այն, ինչ որ տեղի է ունեցել այսօր։ Զրկված ծնողների գգուանքից, երեխերքը մխիթարութիւն էին գտնում սպասաւորների, սպասուհիների ու ձիապանների ընկերութեան մէջ։ Ոչ պակաս զզուանք էին պատճառում նրանց զանազան դաստիարակներն ու դաստիարակուհիները. եւ ի՞նչ ազգից չեն ունեցել սրանց՝ գաղիացի, գերմանացի, ռուս, անգլիացի... Նրանց հոգիները սրանց ոչ ոքին սիրած չէին եւ այսու պատճառաւ խորշում էին սրանցից։ Մայրենի լեզուն աքսորված էր այս ընտանիքից. զանազան լեզուներով խօսել, գրել, կարդալ էին սովորում, անծանօթ մնալով հայի այբբենարանին։ Անգոսնում էին այդ լեզուն եւ երգիծաբար վերաբերվում հային։ Համաշխարհային մարդիկ էին պատրաստում յաջորդ սերունդից, և բարւոյ տեղ ատելութիւն էին ներշնչում դէպի մարդկութեան մի անդամը՝ դէպի հայը....։

Շինութիւնը հիմք չունէր, աւազի վրա էր հաստատած, եւ աւերվելու համար առաջին տեղատարափին էր սպասում։ Սա էլ երկար սպասել չը տուաւ իրան. ահա խաղաց դուժարբերը, եւ ինչ որ բռնի պահած էր մի նեղ ընտանեաց շրջանում, տաւ, տարաւ իր հեղեղի հետ։ Հօր մահից յետոյ ամենքը իսկոյն փոխում են իրանց գործունէութիւնը. մէկը համալսարանից դուրս է գալիս ուսումը չաւարտած, գտնելով իր մէջ մեծ հակումն դէպի վաճառականութիւնը, և մի գեղեցիկ օր ինչ որ ունի չունի կորցնում է բորսայի մի խաղում։ Միւսը գիմնազիայի 5րդ դասատունն է թողնում, յայտնելով թէ՝ անվախճան սէր է զգում դէպի թատրոնը. դառնում է դերասան, մի չորրորդ կարգի դերասան։ Երրորդը մեր դիւցազն է, որի վրա պիտի խօսինք այսօր։ Աղջկերանցից մէկը ի վերուստ կոչված է եղել կանանց հարցի դրօշակակիրը լինել, եւ ոտը դրած չը դրած մայրաքաղաք, որպէս ազատ քաղաքացուհի, ոչ պակաս ազատ քաղաքացիներ ու քաղաքացուհիներ է յղել ու ծնել։ Միւսը կորցնելով պարկեշտութիւ-

նը, ոխերիմ թշնամի է եղել եկեղեցական, ամուսնութեանը։ Սրանց պառաւ մայրը այժմ ապշած զարմանում է զաւակների այսքան անառակութեանց վրա, չէ հասկանում թէ՝ այդ ինչպէս պատահեց, որ այնքան գումարներ վատնելուց յետոյ նրանց դաստիարակութեան համար այսքան անառակ են դուրս եկել. «էլի ինչ Աստուծու կրակն էր պակաս մնացի, վուր էսքան ագէտ են դուրս եկել ու խայտառակում են իրանց մամի անունը»։

— Ո՞վ էր ասասում, որ Փառաւորովի պէս մամին, գանգատվում է պառաւը, — էսպիսի փուչ փչանալուներ ժառանգին։ Տեսնիս ո՞ւմն իմ վատութիւն առիլ, վուր Աստուծ առաջս է բերի։ Խաւարի իմ օր ու ումբրս, վուր դինջանայի... Աստուծ, Աստուծ, իմ քաշածը՝ մլթոնի ու մոսրանին չը քաշէ...

* * *

Փառաւորեանց երիտասարդը նոյն իսկ այդ «Փառաւորովի պէս մամի» որդին էր։ Հօր մահից յետ սա իսկոյն Լաղարեան ճեմարանը թողնելով, առանց ուսման ընթացքը աւարտելու, գալիս է Պետերբուրգ։ Այստեղ մի քանի տարի նա յաճախում էր արքունական համալսարանը, եւ, աւելի ուղիղ կը լինի ասել, յիշվում էր համալսարանի ուսանող, մինչդեռ իր ամբողջ ժամանակը ընծայած էր ամենայն տեսակ ցնդի կենցաղավարութեան։ Նա հարուստ էր, և իր ելեւմտից վերաբերմամբ ոչ ոքին պարտաւոր չէր հաշիւ տալու։ Քաղաքը մեծ էր, գայթակղութիւններն բազմազան, բուն ծանօթներն սակաւաթիւ։ Որքան աւելի արկածաբեր լինէր օրը, նոյնքան ուրախ եւ զուարճ էր նա։ Քսան եւ չորս տարուայ հարաւային արիւնը ծփում էր նրա երակների մէջ. նա սիրում էր գաղիուհիներ եւ միանգամայն «ոսկի երիտասարդութեան» անդամ էր կոչվում։ Գաղիուհիք և առ հասարակ «այս տիկնայք» մեծ դեր խաղացին նրա կեանքում։ Գաղիուհիք կլանեցին նրա ամեն հարստութիւնը, «այս տիկնայք» կենցաղածիր (կարիերա) բաց արին նրա առաջ։ Առաջինները իրանց անելիքը վաղընդ-փոյթ կատարեցին, իսկ «այս տիկնայք» մեծ փորձերի նրան ենթարկեցին, մինչեւ որ ասպարէզ բաց արին նրա առաջ...

Սոյնանման անթիւ արարքները էժան չը նստան նրան. շուտով վրա են հասնում եւ դժուար օրերը։ Հերթը գալիս է պարտատէրերին եւ վաշխառուներին։

Միշտ կը գանգատվէր առաւել եւս մի յայտնի վաշխառուի ձեռից. — Որտեղ էլ որ տեսնի ինձ, չը բաց առնելով մինչեւ անգամ եկեղեցին, (այդ ժամանակաշրջանում Փառաւորեանցը ամեն կիրակի կ'այցելէ եկեղեցին), միշտ միտս պիտի բերէ պարտամուրհակս։ Մոռացել է անպիտանը, որ մի դիշեր թղթախաղում հօրից քառասուն հազար է տարել, եւ այժմ մի ինչ վեց հարիւր բուբլու համար սատկում է, հոգի է տալիս։ Հօրս կռուփները մոռացել է. եթէ նրա երեսին մի լաւ նայելու լինիս, անշուշտ հօրս մատների հետքերը պիտի դտնես։

Այսպիսի դժուար օրերումն էր Փառաւորեանցը, երբ նա «այս տիկնոջ» աչքումն է ընկնում։ Այս տիկինը... միլիոնաւորի տարփածուն էր եւ սրանից ունէր երկու աղջիկ։ Զը նայելով այսպիսի մի կապի վրա, այս տիկինը միանգամայն ազատօրէն էր իրան պահում եւ շատ ստէպ սիրահարվում էր սրա նրա վրա, ինչպէս այս անգամ Փառաւորեանցը դառնում է նրա ջերմագին սիրոյ առարկան։ Բայց այս սէրերը երբէք հաստատուն չէին եւ միշտ անցնում էին ազմկօրէն և արագ։ Այս անգամ «այս տիկինը» ահա որպէս վարուեց իր սիրականի հետ։ Մի օր, երբ գալիս է Փառաւորեանցը նրա մօտ, շատ ոառը ընդունելութիւն է գտնում այստեղ։ Այս տիկինը, խօսքը ջերկարելով, ուղղակի յայտնում է Փառաւորեանցին, որ այսօրվանից էլ ամեն բան վերջացած պիտի համարվի և ոտ չը պիտի կոխէ այս տունը, եթէ չը պակվի նրա անդրանիկ աղջկայ վրա։ Որքան անսպասելի էր այս-պիսի մի առաջարկութիւն, նոյն աստիճան եւ ոչ պակաս անսպասելի ելք ստացաւ նա. Փառաւորեանցը ընդունում է այդ առաջարկութիւնը եւ շուտով դառնում է.... միլիոնաւորի եւ «այս տիկնոջ» փեսան։ Այնուհետեւ նա սկսում է վայելել ծերուկի մտերմութիւնը եւ ստանում է նրա դործարանատան ֆիրմայի ներկայացուցչութիւ-

նը։ Հանդերձեալում հայի բնատուր ճարպիկութիւնը պակում է ամեն բան։ Կենցաղածիրը բաց էր նրա առաջ եւ մեռնել էլ հարկաւոր չէր, ինչպէս կասէ ռուսը։

* * *

Այսուհետեւ նա faiseur-ի տիտղոսն էր կրում, եւ իր ունեցած յարաբերութիւններով գործաւոր շրջաններում շուտով անուանի է դառնում ամենայն տեսակ գործեր գլուխ հանելում։ Ոսկի երիտասարդութեան մէջ անցեալ ցնդի կենցաղավարութեան ժամանակ նա մեծամեծ ծանօթութիւններ էր կապել եւ այժմ շրջահայեցութեամբ եւ շատ խելացի հարստահարում էր այդ ծանօթութիւններն։ Իր ամբողջ ընդունակութիւնը, խելք ու իմաստը տուած էր գործաւոր աշխատանքին։ Ժամանակը ոսկի է, ոսկին ձերբածու թել է մայրաքաղաքի գործաւոր լաբիւրինթոսում. ահա՛ այն դեվիզը[1], որին սկսեց ծառայել Փառաւորեանցը։ Ի տեղին է ասել, որ նա յարմարագոյն է գտնում այդ լաբիւրինթոսի մէջ իր մականունը փոխել եւ չինել Պարամոնով. Վլադիմիր Վասիլեվիչ Պարամոնով, Վահան Բաղդասարեան Փառաւորեանցի փոխարէն։ Այժմ նա արդէն ամենայն իրաւունք ունէր մեր հայ գաղթականութեան պատուաւոր անդամների թիւը մտնել, բայց կտրել էր իր ամենայն յարաբերութիւններն այդ գաղթականութեան հետ։ Վլադիմիր Վասիլեվիչը երբէք չը պիտի ներէ, որ իր սուղ վիճակի մէջ անցեալում այնքան հալածանքի էր ենթարկել մէկը, իսկ միւսը իր կարծածին բարձրութիւնից արհամարհանքով էր վերաբերվում դէպի նա, եւ որը նոյն իսկ ակնարկեալ հալածանքների բուն հեղինակն է եղել։ Այս երկու անձինքների մէջ նա ամբողջ հայութիւնն էր նշմարում։ Նա զզուել էր սրանցից, ասել է, զզուել էր նա հայութիւնից։

— Զարմանալի բան է, կ'ասէր Վլադիմիր Վասիլեվիչը, — հայի այդ յատկութիւնը ... Վերցրէք, օրինակի համար, մի ընկերութիւն, մի հասարակութիւն, մի որ և է խումբ, որի մէջ մի հայ կայ։ Դուք կը նը-կատէք, որ այդ միակ հայը եղել է այդ ընկերութեան, այդ խմբի սիրտն ու հոգին. ամենքը նրան սիրում են, պատուում են եւ հաւատում։ Բայց դու արի ու տես, երբ այդ ընկերութեան մէջ երկրորդ հայը մուտ գտաւ, այն ժամանակ ... այն ժամանակ, մնաս բարեա՛ ընկերութիւն, սէր, պատիւ, ու յարգ ...

Այս հատուածն այնքան հեռի է գընացել, որ նրա տան դուռն միանգամայն փակված է հայի համար, լինի նա՝ վաճառական, աստիճանաւոր, հոգեւորական, ուսանող և գիտնական։ Բայց սակայն հարկաւոր է նկատել, որ տարէնը երկու անգամ, Զատկին ու Ծննդեան տօնին հայոց հոգեւորականութիւնը գալիս է սրա տունը օրհնելու։ Նրանց ամեն անգամ հանդիպում է սպասաւորը, որի ուղեկցութեամբ մտնում են ընդունարան սենեակը, ուր սեղանի վրա արծաթեայ ամանի մէջ գտնում են պատրագի ջուր և որը իսկ օրհնում են։ Նոյն իսկ սպասաւորի ձեռից ծրարների մէջ ներփակեալ դրամը ստանում են ու գնում։ Այսպէս ամեն տարի ... Տիրացուի զննիչ հայեացքը երբէք չէ նկատել, որ այնքան սենեակների մէջ, որք ընդունարանից երեւում էին, մարդու նշան երեւար. հէնց իմանաս ամբողջ կացարանի մէջ միակ այս սպասաւորը լինէր։ Բայց եւ այնպէս, որքա՞ն հետաքրքրութիւն էին պատճառում մեր տիրացուին այս ամեն կահկարասիքը։ Նա շատ կը տար, եթէ մի կենդանի հոգի լինէր այստեղ այս ընտանիքից, բայց ոչ ոքին չէ տեսնում։ Ճարը կտրուած դիմում է սպասարորին. «Ո՞րպէս է ձեր պարոնի առողջութիւնը. ի՞նչպէս են, լա՞ւ են, առո՞ղջ են, ի՞նչպէս է աղջիկ-պարոնը, երեխե՞րքը ... Ձեր պարոնի մայրը Պետերբուրգ էր եկել, յե՞տ գնաց, թէ այստեղ է։ Երեւի ձեր պարոնը այցելութիւններ անելու է գնացել։ Ոչ ոք տանը չը կա՞ ...»։ Սա հարցերի մի պայթիւն էր, որ դուրս էր թռչում գրգռած հետաքրքրութիւնից առանց պատասխաններին սպասելու, որովհետեւ գիտէր սպասաւորի անբաւականացուցիչ պատասխաններն. «ո՛չ, այո՛, այդպէս է», միշտ լակոնական պատասխաններ։ Ամեն մի ընտանիքից տիրացուն մի մի պատմութիւն դուրս կը բերէր այս տոնե-

(1) Նշանաբան

ին, բայց այստեղ երբէք ... անկարող էր մնացել։

Վլադիմիր Վասիլեվիչի հայատեցութիւնը այն ծայրայեղութեան էր հասել, որ չատ անգամ վիրաւորում էր եւ նրան, ով մի որ եւ է հասարակ ուշադրութիւն է ցոյց տալի դէպի նրան, ինչպէս հային։ Երբէք չը պիտի մոռանամ մի դիպուած։ Մի օր գալիս է ինձ մօտ մի ուսանող եւ առաջարկում է ինձ տոմսակ վերցնելու հայ ուսանողութեան ներկայացումի համար, որը մի քանի օրից յետոյ տեղի պիտի ունենար։ Սրա այլայլված դէմքը ու սաստիկ տարուբերումը իմ ուշադրութիւնս գրաւեցին։

— Ի՞նչ ունիք, բարեկամ, գոյն չը կայ ձեր երեսի վրա, արդեօք առո՞ղջ էք, հարցնում եմ երիտասարդին։ Կարծես հէնց այդ հարցին էր սպասում... — Ես առողջ եմ, ջղաձգային սարսուռով խօսեց երիտասարդը, եւ մի ակնթարթում պղտորուեց նրա աչքերը արտասուքով, — բայց ահա այս երեք ռուբլին... ահա՛ ամբողջ ժամ է ինձ տանջում է, այրում է ինձ, չը գիտեմ ուր փախչեմ սրա ձեռից... հա՛, այսպէս... այսպէս, պատռտելով թղթադրամը շարունակեց նա, — այդ դրամով ամբողջ ուսանողութիւնը անարգեցին...

Երբ ջղային տագնապը անցաւ, նա ինձ պատմեց, թէ տոմսակ էր տարել Պարամոնովին, իսկ սա տոմսակը չէ ընդունել եւ սպասաւորի ձեռքով երեք ռուբլի էր դուրս ուղարկել ուսանողի համար...

(ՄՇԱԿ) ԾԽԱԿԱՆ

ԳԱԽԱՌԱՑ ՎԻՃԱԿԸ

ՊԻԹԼԻՍ

ԱՐԾԿԷ, 6 Յունիս

Վանուցս գիշերօթիկ վեցաթիւ աշակերտաց համազգեստը պատրաստելու եւ ուրիշ ինչ ինչ ստիպողական ու անհրաժեշտ պիտոյից պակասը լրացնելու ըղձիւ, մեզմէ միօրեայ ճանապարհաւ հեռի դրացի սեպուած Պիթլիս քաղաքի Հայոց օգնութեան կարօտանալս ինձ խիստ զգալի լինելով՝ ներկայ ամսոյ 4էն մինչեւ 21ը անդ գտնուելու բաղդաւորութիւն ունեցայ. սակայն առաւել բարեբաղդ եւ առաւել ըղձալակ կարող էի լինիլ, եթէ ազգայնոցս սիրտերը տեղական Առաջնորդի անհրապուրիչ արարքներէն չը գայթակղած եւ խաղաղութիւններին իսպառ չը վրդոված տեսնէի. բայց եւ այնպէս նորէն այդչափ չը-փոթ դրութեան մէջ, նոքա՝ որքան որ հնար էր՝ յիշած նպատակիս մէջ չը թառմեցուցին սիրտս։

Իսկ ես՝ ի փոխարինութիւն նոցա նիւթական բարեաց, ժամանակի պահանջած պատշաճաւոր իմաստներով յեկեղեցիս եւ ի դպրոցս քաղաքին խօսելու ձանձրոյթը չ'ըղգալէս զատ, յանձնէն ի բաց թօթափած եւ լոկ անձնական շահածարաւութեան ոգւով տոգորուած ժողովարարի մ'անհամբոյր պատկերին քանի մը հրապարակային դիտողութիւն ընելէ չեմ դանդաղիր, որ զգայուն եւ ողջամիտ հայ կղերի մ'անժխտելի պարտականութիւնն է։ Արդ ես՝ նախայիշեալ Առաջնորդ Տ. Մովսէսի պաշտօնական փառքը վաղաթառամ ընելուն առթիւ զՊիթլիսցիս չեմ կարող անուանել անհովուասէր ժողովուրդ, մինչ իսպառ անոյշ եղած էին նորա պաշտօնական կեանքէն մի նշանախեցի չափ բարիք կթելու։ Իրենց սրտից մէջ անջինջ էր նոխորդ Տեղապահ Մոկացեան Գեր. Մեսրովբ վարդապետի անունն, որք նորա ուսումնական կարեւոր ճիւղի զարգացման նկատմամբ բազմաբեղուն այխատութենէն արտահոսեալ քրտունքն իբրեւ մի պաշտելի առարկայ հաշուած՝ կը տարփողէին զնա։

Չեմ և կարող զնոսա ուսումնատեաց կոչել, մինչ նոցա մէջ բաւական թուով ուսեալ, կիրթ եւ հայրենի օրինաց եւ կրօնի նախանձախնդիր մարդկանց յատկանիշն ունէին իրենց ճակատուց վրայ։ Զայս ապացուց իրենց Խնդրակատարի վանուց երեք հարիւր օսմ. ոսկւոյ պարտուց ընդ վաղ վաղ վճարումն որ ծանրացած էր ի հրդեհին վանքին կրպակներն ի մոխիր դարձած լինելով։ Եւ մինչ ի քննին մատեայ թէ ի՞նչ եղանակաւ տեղի ունեցաւ յիշեալ գումարի

հանդանակութիւնն, ի զարմացումն ինձ պատասխանուեցաւ, թէ երկու Մեծ. անձինք 25 ական ոսկի, քանիքը՝ 10 ական, այլքը՝ 5 ական, եւ իւրաքանչիւրն ըստ կարի, և 50 ոսկի եւս իգական սեռի կողմանէ նուիրաբաշխելով՝ վերջացած էր, ո՛չ շատ ասելով՝ ի շնորհս վանուցն հոգաբարձու Մեծ. աղայից. անդ կը զարգանան եւ 22 որբ եւ աղքատ սանունք ընդ դաստիարակութեամբ Վանցի Բիւզանդեան վարժապետի։ Սոցա յատկական այց տալով՝ քաջալերեցի զանոնք յԱստուածայինսն թեւակոխել ի գիտութիւն եկեղեցւոյ արժանաւոր ժառանգներ պատրաստուելու։ Քան զայս առաւել փայլուն կրնար ի հաշիւ առնուիլ եւ Կարմրակայ եկեղեցւոյ դպրոցին մանկըտեաց յառաջդիմութիւնն, որոց ուսուցիչքն էին Վանցի Շաղոյեան մի ուսեալ երաժիշտ քահանայ և քանի մը եռանդնոտ ուսեալ և բարեկիրթ երիտասարդներ։

Ուսումնական շաւղին վրայ յառաջ կը խաղային եւ Հինդ-Խորան եկեղեցւոյ դըպրոցի մանկտիք ընդ խնամով երկու ուսեալ եւ աշխոյժ ընիկ վարժապետաց։ Սակայն յետադիմական գծին վրայ բեւեռուած կ'երեւնային Առաջնորդանիստ Ամլորդւոյ վանուց եւ Ս. Սարգսի եկեղեցւոյ դպրոցները, մանաւանդ Ս. Գէորգայ դպրոցն, որոյ փակման սգահուչակ հանդէսը նոր կատարուած էր և այն՝ թերեւս յերեսաց թուլամորթութենէ վարձկան հովուին։

Արդ՝ իմ սատանօր ոչ այլ ինչ կը նշանակեն անաչառ դիտողութիւնք. եթէ ոչ քաջալերել զՊիթլիսցի հայ յառաջդիմասէր ժողովուրդն անդուլ լինիլ իրենց եռանդի ու խանդի մէջ ի պարծանս ազգին եւ ինքեանց։

Անդ թերութիւն մի եւ եթ գտայ, զի Մահմէտական հայրենակցաց կրտսերագոյններու շարքին մէջ, այն է 10-12 տարեկաններըն յանցանելն հայ կղերականաց ընդ փոզոցս քաղաքին, ինչպէս որ Եբրայեցի մանկըտին Ցիսուսի յԵրուսաղէմ մտնելուն Ովսաննա. . . օրհնեալ եկեալ կը կանչէին, սոքա եւս նախատական բանիւք բարբաճայն կ'աղաղակէին զհետ նոցա մինչև որ աներեւոյթանան իրենց աչուքներէն. եւ այս՝ իրենց ծնողաց յոռի դաստիարակութեան տալուէ, զորս կարող է տեղւոյն Բարձր. կուսակալը սաստել եւ պատժել միով ակնարկութեամբ, եթէ ի պաշտօնէ յայտարարուի Ն. վսեմութեան։ Արժանի էր որ պատժուէին նաեւ նախայիշելոց կարգէն նոյն միջոցները Ամլորդւոյ վանուց տաճարի լուսամուտէն ներս միզող երկու յանդուգն պատանիքն, որոյ առթիւ ժողովուրդը հոգեւորապէս վիրաւորուած լինելով՝ մի ամսոյ չափ փակած էին տաճարին դուռն, որոյ ընդ երկար միջոց փակ մնալը հաւանական կ'երեւնար, եթէ մեր այցելական միջամտութիւնը տեղի չ'ունենար։ Այս մասին թէեւ Գեր. Առաջնորդին կողմանէ թղթրիրով մը խնդրուած էր կուսակալութենէն պատժել սրբապիղծ սրիկայներն, սակայն անգործադրելի մնացած էր։

Զեմ կամիր անյիշատակ թողուլ նաեւ ի վերադարձիս Դատուան գիւղի հայոց Միացեալ Ընկերութեանց կողմանէ բացուած դպրոցին տեսած նոր յառաջդիմութիւնս ընդ դաստիարակութեամբ Տ. Սարգսեանց Տ. Մելքիսեդեանի, ընդ որ ուրախ ի սիրտ, ուրախ մանաւանդ երբ կը տեսնայի տեղւոյն քահանայք եւ իշխանք եւ ժողովուրդ ընդ աչացն՝ եւ սրտերնին բացած՝ կը խանդաղատէին դպրոցին և նորա պիտոյից կանխատեսման եւ հոգացման մէջ։ Ա՜հ, երանի էր թէ Հայոց ազգի կրթական ուժոյ ապագայն ապահովող սոյն կենսական ընկերութիւնն, ինչպէս Հայաստանի քանի մը մասերն իւր արտափայլող լոյսով լուսաւորելու կը ճգնի յանխոնջ աշխատութիւնս, Բզնունեանց հին աշխարհի նեմ անկիւնին մէջն եւս ցոլացնէր իւր ճառագայթներու մի փոքրիկ շող։ Թերեւս այդու միջոցաւ քաղցրանայր և այս կողմանց ուսումնածարաւ հայոց այն ճաշակն, որով կեայ մարդ կենդանի, փայլուն և նախապատիւ մարդկային դասակարգութեան մէջ։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ՍՕԼԱԽԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱԽՆԵԱՑ ԱՌԱԿՆԵՐ

Հետեւեալ առակներն կ'ընդօրինակեմ հնցած փտած գրչագիրներէ, ո՞ւ կը յուսամ սիրով պիտի կարդացուին ու գաղափար մը պիտի տան ընթերցողին քանի մը դարեր առաջ Միջագետաց Հայերու առակներուն վրայ։ Կէտադրութիւնք կը նշանակեն աղաւաղեալ ու անընթեռնլի կէտեր։

Առիւծն հիւանդացաւ եւ յղրկեաց բըժըշկաց խնդիր զի թերեւս դեղ արասցեն ցաւոցն, և եկեալ բժշկապետացն ասեն ընդ առիւծն թէ քո ցաւոցդ այլ դեղ չի կայ քան զիշուն ականջ կտրեն եւ սիրտն հանեն եւ տան որ կերիցես եւ աղէկնաս։ Եւ ասէ առիւծն ընդ աղուէսն թէ կարես էշ մի գտանել եւ բերել. եւ ասէ աղուէսն խիստ շուտով կատարեմ զհրամանդ, ով առիւծ, քանզի ունիմ ինձ եղբայր էշ մի եւ է խիստ սաստիկ գէր եւ յասինչ անուն հովիտն արածի։ Եւ գնաց աղուէսն առ էշն ասէ. ով բարի հեզ էշ, այժմ գիտացիր թէ մեծ փառաց կամիմ հասուցանել զքեզ. քանզի առիւծն որ է թագաւոր ամենայն գազանաց, հիւանդացեալ է և մերձ ի մահ. եւ կամի տեսանել զքեզ զի թագաւորութիւնն ի քեզ տայ։ Ուրախացաւ էշն եւ եկն առ առիւծն. թագաւորն գազանաց կամէր համբուրել զէշն. եւ ընդ այս էխած զփողն իշուն, եւ էշն փրթեաւ եւ փախեաւ։ Աղուէսն հասեալ էշուն ասէ. ո՛ անմիտ, ընդէ՞ր փախեար. եւ ասէ էշն թէ ի համբուրելն կսկծեցոյց զիս. եւ պատասխանի ետ աղուէսն ասէ թէ ի խիստ սիրոյն էր այդ. դարձիր անդրէն եւ մի փախչիր երբէք։ Եւ եկն էշն կրկնակի առ առիւծն. և առիւծն կալեալ զփողքն իշուն խզդեաց ըզնա։ Աղուէսն գաղտ հանեալ զսիրտ իշուն եւ զականջսն կտրեաց եւ կերաւ. եւ ասէ թէ դեղ է լաւ ինձ քան առիւծին։ Եւ գընաց աղուէսն առ արիւծն եւ բժիշկն ասէ եկայք զարմանք եւ հիացումի իրս տեսէք որ այն էշն ո՛չ սիրտ ունէր ո՛չ ականջ։

Այր ոմն բակլայ եւ սիսեռ ցանեց ի յանցս ջրոց եւ սովորեցան բադերն եւ սագերն եւ ելանէին ի խարցէն եւ ուտէին զբակլան և զսիսեռն։ Եւ գնաց հողագործն եւ ձգեաց ակնատ եւ որոգայթ զչուրջ սերմանցն։ Եւ առաւօտուն առեալ զմահակն կաղնի գնաց եւ ահա եկեալ էին ի յորոգայթէ սագերն, բադերն եւ արագիլ մի։ Սկսաւ այրն հարկանել խարազանաւ զվիզն արագիլին. եւ արագիլն խաւսեցաւ մարդկային բարբառաւ եւ ասէ. «Ո՛վ իմաստուն հողագործ, մի՛ սպանաներ զիս, քո բարեկամն եմ ես, եւ զքո անդաստանդ կը սրբեմ, զմուկն, զաւազն եւ զժժմանքն կու քաղեմ. եւ դու աղէկ գիտես որ ես ո՛չ բակլա ուտեմ եւ ո՛չ զսիսեռն. ողորմեայ ինձ»։ Եւ ասէ հողագործն ընդ արագիլն. «Եթէ դու բարի հաւ ես, զինչ գործ ունիս ընդ չար հաւերոյդ»։ Եւ այրն իսպան արագիլն եւ զայլսն։

Ցուցանէ թէ մարդ որ գող չէ եւ պոռնիկ չէ եւ վատի ընկեր լինի նա մեռանի ընդ վատին, որպէս մեռաւ արագիլն ի հետ բադերոյն եւ սագերոյն։ Զարն չարեաւ մեռցի։

Մկունքն ասացին ընդ իրեարս թէ այս էր է որ մենք ո՛չ զէնք ունինք ո՛չ եղջիւր և կատուն զմեզ դիւրաւ առնու։ Եւ սրբեցին մկունքն փայտ եւ կապեցին ի գլխնին, որ թէ կատուն գայ կռուին։ Եւ ահա եկն յանկարծակի կատուն եւ մկունք փախեան ընդ ծակն ի ներս։ Եւ նա որ փայտն եղջիւր էր կարել նա գամեցաւ եւ չի կարաց մտանել ընդ ծակն, այլ կատուն կալաւ զնա եւ կերաւ։

Ցուցանէ թէ այն մկունքն որ եղջիւր կապեցին եւ այն մարդիկն եւ կանայքն որք կու պճնին եւ ծարրըւին եւ գեղեցկացուցանեն զերեսս իւրեանց. եւ զայն որ Աստուած ստեղծեալ է, ոչ հաւանին, այլ իւրեանք աւելի գեղեցկանան եւ որոգայթին ի ձեռս սատանային, որպէս որոգայթեցաւ մուկն ի ձեռս կատուին։

Աղքատ մի ի գեղ մի գնայր եւ հիւանդացաւ եւ անկաւ ի ճանապարհային եւ ոչ կարէր ելանել եւ ասէ. «Աստուած պատրաստեսցէ ինձ էշ մի և մարդ մի որ դնէ զիս ի վերայ իշոյն, եւ տանի զիս ի չէնն»։ Եւ եկեալ այր մի եւ ունէր էշ մի եւ քուրակ (աւանակ) մի։ Եւ այրն էարկ մահակուլն հիւանդին եւ ասէ. «Արի չալկէ զքուրակս զի ոչ կարէ գալ ի հետ իշոյս»։ Այրն լայր եւ աղաղակէր ասելով. «Վայ ինձ, որ փոխանակ հանգստութեան նեղութեան երիկ *), եւ փոխանակ հեծնելոյն չալկել»։ Եւ այրն աւելի հարկանէր զաղքատն....

Ցուցանէ թէ են մարդիկ որ ի յայս կեանքս կենան ցաւաւք եւ նեղութեամբ, եւ բարւոյ մնան ի հանդերձեալ կեանքն, եւ փոխանակ բարւոյն նեղութեան եւ ցաւոց հանդիպին. եւ են որ չարչարին ի յայս կեանս եւ ի յայն։

Կրեաքն ժողովեցան և գնացին առ արծիւն եւ ասեն. «Ընդէ՞ր է այս որ մեք տըկարք եմք եւ ոչ եմք թռչունք, եւ դուք զօրաւոր էք եւ թռչունք։ Արարէք զմեզ զէթ ձեզ որ թռչինք, եւ եթէ ոչ առնէք զկամս մեր այժմ մեռանիմք»։ Եւ ասէ արծիւն. «Արիւն ձեր ի գլուխս ձեր»։ Եւ արար արծիւն ձայն թռչնոց որպէս սովորութիւն էր։ Եւ առեալ արծուին զթըռչունսն եւ զկրիսան ելի լեառն մի բարձր և քարակարկառ եւ կարգեաց զթռչունքն ի մէջ ընդ մէջ զկրիսաքն, եւ ասէ արծիւն ընդ կրիսան թէ «Ցորժամ ձայնեմ թռչնոցն եւ թռչունք թռին եւ դուք ի հետ նոցա թըռիք»։ Արար արծիւն ձայն եւ թռչունքն թռին եւ կրիսաքն ջանցին թռչիլ եւ անկան ի քարակառն ի վայր, եւ իջան ի խորաձոր մի եւ եղեն կտոր կտոր, հոտեցան եւ եղեն գէշ։

Ցուցանէ թէ կրիսաքն հպարտ եւ մեղաւոր մարդիկն են, եւ սատանա որ եւ հըպարտացաւ եւ փոխանակ շահուն անկաւ ի խորս անդնդոց։ Նոյնպէս ամենայն մեղաւոր որ հպարտանայ, նա զէտ զայն կրիսան լինի։

Հ. ԷԿԻՆԵԱՆ

*) Հին գրչագրաց մէջ «իր» մասնիկը շատ անգամ գրուած կայ եւ, եկ և ուրիշ քանի մը բայերու առջեւ. ինչպէս փոխանակ «եւ» ի իրիւ եւ «եկ» ի երիկ կը գտնենք։

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԻՄ ԼՃԱԿԸ

Ո՛րքան գողտրիկ է
Գարնան աւօտը,
Որ աչերէն լոյս
Ոսկի սփռէ դուրս,
Եւ իւր շուրթերէն՝
Ծոլիտ լուսեղէն։

Ո՛րքան գողտրիկ է՝
Աւօտի եթեր,
Որ կը փողփողէ
Լուսեղէն թերթեր,
Կասլոյտ ունի գոյն
Ջինջ ու անապակ
Գեղ ու փայլ հմակ։

Ո՛րքան գողտրիկ է
Աւօտի արեւ,
Որ կը շողշողէ
Ծաղիկն ու տերեւ,
Բոյր ու գոյն վարդին
Փոքրիկ մանկան կեանք
Սիրուն թռչնեկին՝
Կուտայ գեղգեղանք։

Ո՛րքան գողտրիկ է
Ընդ այգուն պրակ,
Ծառ սա թուփ ունի
Կենդանի դաշնակ,
Որ կը ճռուողեն,
Ճըւճըւան երգեն,
Վիշտ ու անձկութիւն
Սրտէս կը հերքեն։

Ո՛րքան գողտրիկ է
Կոկոնը վարդին,
Փթթած ցողաթուրմ

Շաղոմն աւոտին ,
Ուռ յառած սոխակ
Սիրահար իւր աչք ,
Զքնաղ ի ձայն՝ յար
Հնչէ զիւր քնար ։

Որքան գողտրիկ է
Նայուածքը կուսին ,
Ուր եւ իւր նայուածք
Խառնէ պատանիկ ,
Զոհուի չիջանի՝
Պերճախօս աչաց ,
Որ կը ձօնէ կեանք
Կամ մահ իւր կենաց ։

Այլ քան զամէն է գողտրիկ ,
Արծաթափայլ իմ լճակ ,
Զի ունի զողջ զայսոսիկ
Ի ջինջ վճիտ յիւր յատակ ։

Գարնան աւօտ անդ ցոլայ ,
Եթեր մ՚ամբողջ կայ ի նա ,
Արեւն ի նա փողփողի՝
Անդ եւ պրակ պատկերի ,

Ցարծաթ ալիս լճակին
Տեսնես փարել սոխակին՝
Ի գեղանին սիրուն վարդ ,
Ի բնութեան չքնաղ զարդ ։

Հանդէպ սոցա պատանին
Ի պիշ աչաց կայ կուսին ,
Ոյր սիրտ խօսի , դէմք չիկնի ,
Լինի քան զեւս գեղանի ։

Արդ քան զամէն է գողտրիկ ,
Արծաթափայլ իմ լճակ ,
Որ ունի զողջ զայսոսիկ՝
Ցեթերափառ յիւր յատակ ։

Սշէրդ Պ. ՍՐԱՊԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

ՆԻՔԱՄԻՏ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԸ

Ֆիլատելֆիայէն գրատան մը գործակատարը կը ձանձրացնէր զՊ. Ճէյմս Ուոդսըն , մեծահարուստ և ագահ դրամատէր ի Նիւ-Եւրք։Պ. Ուոդսըն, վերջապէս օձիքն ազատելու համար , գնեց այդ յամառ գրավաճառին ընծայած հատորը , Քրիստոֆոր-Քոլոմբոսի առաջին ճամբորդութիւնները ։

Պ. Ուոդսըն քառորդէ մ՚ի վեր տունէն դուրս ելած էր , երբ իւր կինն , որ գնացած էր բարեկամուհւոյ մը այցելութիւն տալ, տուն վերադարձաւ ։ Գրատան գործակատարն որ շրջակայքը կը սլըդտար, անմիջապէս ներկայացաւ եւ ջերմապէս պընդեց Տիկին Ուոդսընի որպէս զի օրինակ մը գնէ Քրիստոֆոր-Քոլոմբոսի առաջին ճամբորդութիւններէն ։ « Իրա՛ւ որ , ըսաւ ինքնիրեն բարի տիկինը , գուցէ այս գիրքս հաճոյք պատճառէ ամուսնոյս ։ Կը գնեմ ։ »

Երեկոյին , Պ. Ուոդսըն տուն վերադարձաւ ։ Տիկինը նմա ներկայեց իւր գնած հատորը ։

— Վա՛յ Թշուառական , գոռաց դըժբաղդ ամուսինն ։ Այդ նզովեալ գրավաճառն արդէն այս առաւօտ բռնադատեց զիս այդ գրքէն գնելու ։ Անզգա՛մ։ Եթէ ձեռքս անցնէր ։

— Օն , սիրելիս , ըսաւ Տիկին Ուոդսըն , մի՛ բարկանար ։ Գործակատարն անշուշտ պիտի գայ ետ առնու մեզ ծախած երկրորդ օրինակը ։

— Ի՛նչ յիմարի խօսքեր կ՚ընես . . . Գըրաւ կը դնեմ թէ այդ չարագործն արդէն հեծած է Ֆիլատելֆիոյ կառախումբը ։ Ո՛հ , եթէ ձեռքս անցնէր ։

— Աւասի՛կ , աւասի՛կ , ընդմիջեց յանկարծ Տիկին Ուոդսըն որ պատուհանին մօտ կը գտնուէր եւ տեսած էր գրավաճառին դէպի կայարան վազելը ։

— Աւա՛ղ , ըսաւ տխրութեամբ Պ. Ուոդսըն , չը պիտի հասնիմ . . . Կօշիկներս հաներ եմ ։

Սակայն նոյն միջոցին , դրամատէրը կը նշմարէ իւր դրացի եւ բարեկամ Ստիֆէնս որ պատուհանին տակէն կ՚անցնէր կառքով ։

— Ստիֆէ՛նս , Ստիֆէ՛նս , կը պոռչտայ , կը տեսնէ՞ք հունա սա գրավաճառը ։ Կը պաղատիմ , բարեկամս , գնացէք , վազեցէք , բռնեցէք եւ ողջ կամ մեռած ինծի բերէք ։

Պ. Ստիֆէնս շնչասպառ կայարանը կը

հասնի, այն պահուն ուր Ֆիլատելֆիոյ կառախումբը մեկնելու վրայ է։ Հազիւ հազ ժամանակ ունեցաւ նետուելու այն վակոնին տախտակին վրայ ուր գրավաճառը նըստած էր, եւ պոռալու.

— Պ. Ուոդսըն քեզի կ'ուզէ։

— Ա՛հ, իրաւ, աղէկ միտքս ձգեցիք. մոռցայ իրեն տանելու օրինակ մը Ֆրէսոնէոնիեան առաջին մարդիրոնիրէն զոր խնդրած էր ինձմէ. աւասիկ, երկու տոլար է։

— Աւասիկ երկու տոլարդ, բարեկամ, ըսաւ Պ. Սդիֆէնս, սքանչանալով որ այնքան լաւ կատարած էր իւր պաշտօնն եւ հրաժեշտի ողջոյն մը ղրկելով գրավաճառին զոր կառախումբը կ'առնուր կը տանէր։

Կէս ճամբան, բարեբաստիկն Սդիֆէնս հանդիպեցաւ դրամատիրոջ որ դէպ ինքն կուգար։

— Քովս է, պոռաց ուրախութեամբ, քովս է, սակայն ի՛նչ դժուարութիւն քաշեցի։

— Ո՞ւր է, հարցուց Ուոդսըն, չորս դին փնտռելով գրատան գործակատարը։

— Աւասիկ, ըսաւ Սդիֆէնս՝ յաղթանակաւ ցոյց տալով Ֆրէսոնէոնիեան առաջին մարդիրոնիրուն օրինակը։

— Նորէ՛ն. ասով երեք կ'ըլլայ, առնաց տարաբաղդն Ուոդսըն, եւ մարեցաւ ինկաւ քարայատակին վրայ։

ՀԱՏԸՆՏԻՐ ԱՄԱՑՈՒԱԾՔ

(ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ՅԱՐԱԲԵՐԵՆԷ)

Գիտուն, ուսանող եւ ունկնդիր եղիր, տգէտ մի՛ լինիր որպէս դի չը կորսուիս։

Անդստին ի մանուկ տիոց չ'ուսանող պատանին՝ ի չափահասութեան յետադէմ եւ կարօտ կը լինի։

Քիչ հակառակող գիտունը, քիչ համաձայնող տգէտէն լաւագոյն է։

Գիտութիւնն ու հարստութիւնը ամէն թերութեանց սքօղիչ են, իսկ տգիտութիւնն ու աղքատութիւնը թերութեանց հրապարակող են։

Որբ չէ այն՝ որոյ հայրը մեռած է, այլ նա է ճշմարիտ որբն՝ որ զուրկ է յուսմանց եւ կրթութենէ։

Եթէ դրախտին մէջ առընթէր տգէտի մը ներկայութիւնն ունենայի, կամայօժար դրախտը թողլով դժոխոց կրակը ապիտի մեծարէի։

Մարդս իւր չը գիտցածին թշնամին է։

Լաւ է ունենալ ուսեալ թշնամի, քան անուս բարեկամ։

Տգէտներուն թագաւորութիւնը գիտնոց զգուանք կը պատճառէ։

Անձիդ կրթութիւնը լաւ է քան զոսկի։

Խելացին իւր գործոց մէջ յառաջդիմելու ջանք կ'ընէ, իսկ տգէտն առանց աշխատելու կը հաւատայ հասնիլ իւր բաղձանաց։

Ընդ տգէտս յարաբերութիւն ընող անձը տգէտ է։

Իմաստակներն ընդհանրապէս զուարճաբան կը լինին։

Տիեզերական հարստութիւնը խելքն է, եւ համաշխարհային աղքատութիւնն անխելքութիւնն է։

Բաւից չատութիւնը խելից նուազութեան ապացոյցն է։

Գիտնոց հետ բանակցողն ուղիղ յուղի կ'ընթանայ։

Ճշմարտութեան հետեւողն իւր փափաքանաց կը ժամանէ։

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

Թիւ 21. (Մասէ. Թիւ. 3814)
» 40. » » 3834)
» 41. » » 3835)
» 42. » » 3835)
» 43. » » 3835)
» 44. » » 3836)

ԽՆԴԻՐ
ԹԻՒ 45․

Մայր մը իւր աղջկան հաշուական կարողութիւնն իմանալ ուզելով, 80 ֆրանք կուտայ նմա, պատուիրելով որ թուղ գնէ ։ —Ո՞րչափ մայր իմ, կը հարցնէ աղջիկը․ —Ինձ բերելիք մնացորդ ֆրանքներուդ հինգ անգամին չափ կանգուն ․ —Ի՞նչ գին ․ —Եօ բերելիք գումարդ պէտք է ճշդիւ ներկայացնէ 1 կանգուն և 2/3 ի գինն ։ —Հաշուել թէ քանի՞ կանգուն թուղ գնելու էր աղջիկն և քանիի՞ ։

ԽՆԴԻՐ ԹԻՒ 39
ԼՈՒԾՈՒՄՆ

Մ Կ ըլլայ ներքին երկատիչն, կ'ունենանք ․

$$\text{Օ Կ Մ} = 180 - (\text{Կ Օ Մ} + \text{Կ Մ Օ}) \cdot$$

արդ Կ Օ Մ անկեան չափն է $\frac{\text{աղեղ Փ Դ}}{2} =$

$$= \frac{2\ \text{Փ Դ}}{4}$$

(Դ լինելով շրջանակին եւ ՕԲի հատման կէտն) ։

$\text{Կ Մ Օ} = \frac{\text{ՓՄՕ}}{2}$ի չափն է $\frac{\text{աղ. Օ Փ} - \text{աղ. Փ Դ}}{4}$

ուրեմն $\text{Կ Օ Մ} + \text{Կ Մ Օ} = \frac{\text{Փ Դ} + \text{Փ Օ}}{4} = 45^0$,

նոյնպէս $\text{Օ Կ Մ} = 135^0$ · և $\text{Օ Կ' Մ} = 45^0$ ։

Հետեւաբար Կ և Կ' կէտերուն հետքն, ՕՄ ի վրայ իբրեւլար գծեալ 135⁰ եւ 45⁰ անկեանց ընդունակ (քաբապ'լ) շրջանակի հատուածներն են ։

Այս խնդիրը լուծող չ'ունեցաւ ։

ՓՈՔՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍԻ
(Տես նախորդ թիւը)

Պուքրէշ ․— Տ․ Մ․ Ա․— Ձեր Մասիս բաժանորդագրութեան պայմանաժամը լրացած ըլլալով օգոստոս 1ին, փութացէք մինչեւ յառաջիկայ ամսոյ վերջ առ մեզ հասցնել տարեկան բաժանորդագինն, եթէ չ'էք ուզեր որ թերթերու առաքումը դադրի յիշեալ թուականէն յետոյ ։

Պէրաթ․ (Ալպանիա)․— Տ․ Հաճի Ե․— Կարդացէք վերեւի գրուածն որ Ձեզ ալ կը վերաբերի ։

Շապին Գարա-հիսար․ — Տ․ Ե․ Հ․ —Նոյնպէս ։

Գասթամունի ․— Տ․ Խ․ Ս․ — Ձեր Մասիսի պայմանաժամը լրացած է ամսոյս ըսկիզբը ։— Նոյնպէս ։

Սամսոն․— Տ․ Խ․ Է․ — Կարդացէք վերեւի գրուածն որ Ձեզ ալ կը վերաբերի ․

Տիարպէքիր․— Տ․ Կ․ Ս․— Նոյնպէս ։

Սիլիստրէ․— Տ․ Հ․ Յ․— Նոյնպէս ։

Ֆիլիպէ․— Տ․ Յ․ Հ․— Նոյնպէս ։

Տիգրանակերտ․— Տ․ Յ․ Զ․— Նոյնպէս, սակայն տեղւոյն հեռաւորութեան պատճառաւ երկու ամիս պայմանաժամ կու տանք ։

Հասքէօյ (Արև․ Րումէլի)․ — Տ․ Ճ․ Ս․ Խ․— Կը կրկնենք օգոստոս 16ի Մասիսին մէջ գրուածն ։

Մալկարա'— Տ․ Յ․ Շ․— Ձեր պայմանաժամն աւարտած է օգոստոս մէկին․ մինչեւ մէկ ամիս մեզ ղրկեցէք բաժանորդագինն որպէս զի թերթերու առաքումը չը դադրի ։

Աղընի-Մատէն․— Տ․ Մ․ Ճ․—Նոյնպէս մինչեւ երկու ամիս ։

Արղընի-Մատէն․— Տ․ Պ․ Ա․—Նոյնպէս մինչեւ երկու ամիս ։

Պաֆրա․— Տ․ Պ․ Ի․— Նոյնպէս, մինչեւ յառաջիկայ ամսոյ վերջը ։

Պօթուշան․— Արժ․ Տ․ Ք․ Յ․— Նոյնպէս ։

Թաթար-Բազարճք․— Տ․ Օ․ Ս․— Նոյնպէս ։

Այնթապ․— Պատ․ Վարդանանց ընկերութիւն․— Նայնպէս մինչեւ երկու ամիս,

Մաս (Ամերիկա) Տ․ Յ․ Յ․ Ի․—Նոյնպէս ; մինչեւ երկու ամիս ։ Անցեալ տարուընէ մընացեալով կը պարտիք ընդամենը 17 Ֆր ։

Ակն․—Տ․ Յ․ Փ․— Ձեր պայմանաժամը լըրացած է օգոստ․ 1ին․ թուականէս մինչեւ երկու ամիս մեզ հասցուցէք բաժանորդագինը ։

Հալէպ․— Տ․ Ա․ Ս․— Ամսոյ սկիզբէն կ'սկըսինք ղրկել Ձեր Մասիսներն, թուականէս մինչեւ երկու ամիս փութացէք առ մեզ հասցնել տարեկան բաժանորդագինն 69' դահեկան արծաթ ։

Ատանա․— Տ․ Կ․ Տ․ Մ․— Ներկայ շրջանէն Ձեր պարտքը մնացած է երեսուն դահեկան ինչպէս անշուշտ կը յիշէք ․ փութացէք առ մեզ հասցնել սոյն գումարն առաջին առթիւ ։

ԾԱՆՕԹ ․— Վերոյիշեալ Պատ, բաժանորդներէ, ինչպէս նաեւ «Մասիս» ի բոլոր այն բաժանորդներէն որք ո՛ և է գործակալութեան մը չ'են վերաբերիր, կը խնդրուի որոշեալ պայմանաժամներուն անպատճառ Վարչութիւնս հասցնել իւրեանց բաժանորդագներն եթէ չեն ուզեր որ չաբաթաթերթի առաքումն ընդհատի ։ Սակայն կը փութանք յայտաբարել թէ, երբ սոյն բաժանորդագնոց փոխարէն Բօսթի փուլ ղրկել ուզուի, հարկ կ'ըլլայ 69 ղրշ․ ի փոխարէն 76 ղրշ․ ի փուլ ղրկել ըստ օրում 10 0/0 զեղչելով միայն կրնանք վաճառել ․

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

5 Սեպտեմբեր 1886

Շաբթուան ազգային լուրերը գլխաւորաբար Վանայ գործոց կը վերաբերին։ Վեհ. Սուլթանը ներումն չնորհած է ո՛չ միայն Մամլոյ խմբագրին եւ Կարնոյ բանտարկելոց, այլ նաեւ Վանայ վերջին ծանուցեալ դէպքերուն առթիւ բանտարկեալ ազգայնոց, եւ դատապարտեալը ու ոչ-դատապարտեալը Գուրպան Պայրամին առթիւ կայսերական ներման արժանանալով, արձակուած են։ կը յուսացուի որ Վանէն արտաքսուած ազգայնոց եւս թոյլտուութիւն չնորհուի իրենց հայրենի քաղաքը վերադառնալու։ Այս բերկրալի լուրը պաշտօնական եւ ոչ-պաշտօնական հեռագրերով մայրաքաղաքս հաղորդուած պահուն, ո՛չ նուազ գոհութեամբ իմացուեցաւ թէ Վանայ ազգային երկու կուսակցութեանց միջեւ վերջապէս կարելի եղեր է հաշտութիւն մը գոյացնել։ Խառն ժողովն իւր վերջին նստին մէջ Վանայ Առաջնորդական Տեղապահի մէկ յայտագրէն տեղեկացաւ արդարեւ, թէ դաւառին Վսեմ. կուսակայն, ըստ խնդրանաց Ամեն. Ցարութիւն Պատրիարքին, տեղւոյն երկու կուսակցութեանց գլխաւորներն Առաջնորդարան կոչել տուեր եւ ինք եւս հետն առնելով Աղթամարայ Ս. Կաթողիկոսն, անձամբ Առաջնորդարան գնացեր եւ երկու կողմն ի հաշտութիւն յորդորելով՝ համաձայնութիւն հաստատեր է, յորմէ յետոյ երկու կուսակցութեանց երեւելիք Առաջնորդական Տեղապահ Հօր հետ միանալով առժամեայ Խառն ժողով մը կազմեր են վեց եկեղեցական և եօթն աշխարհական անդամներէ։

Կեդրոնական վարժարանի դասախօսութիւնք սկսան սեպտեմբեր մէկին։ Բացման հանդէս չը կատարուեցաւ, ինչպէս ծանուցուած էր կանխաւ. այդ արարողութիւն Ղալաթիոյ չէնքին աւարտումէն ետքի թողուած է։ Երկուշաբթի առաւօտ յիսուն աշակերտք եկած էին. ներկայ էին Խնամակալութեան անդամք եւ դասատուներէն ոմանք։ Գեր. Յովսէփ վարդապետ Այվազեան պարագային յարմար խօսքերով, խրատներով եւ օրհնութեամբք ծանոյց դասախօսութեանց սկիզբը։ Խնամակալութեան Փոխ-Ատենապետ էֆէնտին խօսեցաւ այս նոր հաստատութեան նպատակին եւ ուղղութեան վրայ։ Ցետոյ խօսք առնելով Կեդրոնական Վարժարանի Կարգապահ Մինաս Զերազ էֆէնտի, յորդորեց զաշակերտս որ իրենց աշխատութեամբք արժանի հանդիսանան մեծանուն հանգուցեալին յիշատակին (Տ. Ներսէս Պատրիարքի) որոյ առաւելագոյն հոգածութեան առարկայներէն մին ալ այս դպրոցի բացումն եղած է։ Ապա, ժամանակացոյցի կարգաւ սկսան դասախօսութիւնք։

Ազգային Արհեստանոցի մը հաստատման առաջարկը, զոր յիշեցինք անցեալ շաբթու, սկզբամբ ընդունուեցաւ Քաղաքական ժողովէն եւ այս մասին ծրագիր մը յօրինուելով պիտի մատուցուի Խառն ժողովոյ ընդունելութեան։ Այս կարեւոր հաստատութեան պիտի յատկացուի Սովելոց Կեդրոնական Ցանձնաժողովոյն գնած Թիճարէթ Խանի տարեկան 1,000-1,200 ոսկւոյ հասոյթն։

Գաւառներէն նոր եւ կարեւոր լուրեր չը կան։ Գաղատիայէն յաջորդաբար հասած նամակներ կը ծանուցանեն թէ վիճակին Առաջնորդ ընտրուեր է Արժ. Կարապետ վարդապետ Բագրատունի, որ արդէն Առաջնորդական Տեղապահի պաշտօն կը վարէր անդ, եւ նոյն դաւառին կողմէ Ազգային Երեսփոխան ընտրուեր է Այվազեան Աբրահամ էֆէնտին։ Քարբերդի մէջ եւս կատարուեր է Առաջնորդական ընտրութիւն, սակայն կ'երեւի թէ ո՛չ այնքան օրինաւորապէս, վասն զի Պատրիարքարանին և ազգային լրագրաց ուղղեալ հեռագիրք կը դանդատին թէ Պետրոս վարդապետ ապօրինի միջոցներով իւր անունն ընտրելեաց ցանկին մէջ անցունելով, յաջողեր է Առաջնորդ ընտրուիլ։ Հեռագիրն ստորագրողք կը խնդրեն որ այս ընտրութիւն չը վաւերացուի, իբր ապօրէն. ուստի Պատրիարքարանն ընտրութեանց տեղեկագրոյն կ'ըսպասէ, այս բողոքանաց մինչև ո՛ր աստիճան արդարացի լինելն ուսուցելու եւ որոշում մը կարենալ տալու համար։

Տ. Ա.

Արտօնատէր Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԻՐԱԳՐՈՅ